ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

— o —

ԹԵՄԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ Ա. ՆԻՍՏԸ

—

Հորեքշաբթի, ամսոյս 11-ին Թիֆլիզի առաջնորդարանում նշանակված էր նոր ընտիր թեմական Յանձնաժողովի առաջին նիստը։

Մեսրովբ եպիսկոպոսը Յանձնաժողով ընտրելու շուրջն անցած դարձածը հատառօտակի վերյիշելուց յետոյ՝ յայտարարեց, որ ներկայ Յանձնաժողովը կազմված է Ամենայն Հայոց Կաթողիկոսի տուած կոնդակի իմաստի համաձայն և պէտք է գործի իբրև թեմական Յանձնաժողով։

Այս յայտարարութիւնը ընդունելով ի տեղեկութիւն՝ Յանձնաժողովը նախ և առաջ կազմեց դիւանը հետևեալ կազմով. Նախագահ Մեսրովբ եպիսկոպոս, փոխ-նախագահ՝ Ս. Յարութիւնեան և Ս. Աբովեան։ Գանձապահի ընտրութիւնը յետաձգեց։

Այնուհետև Յանձնաժողովը անցնելով իր հերթական զբաղմունքներին որոշեց յանձնարարել իր նախագահին՝ մի առանձին ժողով հրաւիրել ձեռնհաս մարդկանցից և նրանց հետ միասին խորհրդակցել այն մասին, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել Տօնի նիւթական կողմը ապահովելու համար։

2) Կատարել ընդհանուր հանգանակութիւն ամբողջ թեմում, այնպէս որ իւրաքանչիւր մարդ, անկախ իր դիրքից, միջոցներից, սեռից և մինչև անգամ հասակից մասնակցի հանգանակութեանը։

Այս հանգանակութեան հրահանգները մշակելու համար ընտրուի մի մասնաժողով, բաղկացած հետևեալ երեք հոգուց. Ստ. Լիսիցեան, Նիկ. Կաճկաճեան և Ա. Պօղոսեան։